


ՆՎԱՐԴ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ես՝ Նվարդ Սուրենի Ամիրխանյանս, ծնվել եմ 1953թ-ին Կիրովական քաղաքում, այժմ՝ Վանաձոր:



Ընդունվել եմ Ա.Բակունցի անվան միջնակարգ դպրոցը և ավարտել 1970թ.ին: Աշխատանքի եմ անցել տեղի տրիկոտաժի ֆաբրիկայում որպես որակավորող:

1977թ-ին տեղափոխվել եմ աշխատելու Կիրովականի պետական մանկավարժական ինստիտուտում որպես հաշվառման բաժնի վարիչ:

Սովորել և ավարտել եմ Նույն ԲՈՒՀ-ի մանկավարժության և հոգեբանության ֆակուլտետը:

Ամուսնության պատճառով ազատվել եմ աշխատանքից և տեղափոխվել Թալին քաղաքը:

Ընդունվել եմ աշխատանքի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնում որպես մշակույթի զանգվածային աշխատանքների կազմակերպիչ:

1999թ.-ն ընդունվել եմ աշխատանքի Գյումրու պետական մանկավարժական քոլեջի Թալինի մասնաճյուղում որպես հոգեբանության ուսուցչուհի:

Համատեղության կարգով աշխատել եմ Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի կողմից բացված Թալինի տարածաշրջանային ՔԴԿ գրասենյակի պատասխանատու:

1999-ից 2001թ.-ը մասնակցել եմ կրոնի ուսուցիչների վերապատրաստման դասընթացներին:

2001թ-ին նշանակվել եմ ՀԵՊ առարկայի ուսուցչուհի Թալինի թիվ 2 միջն. դպրոցում:

Աշխատել եմ մինչև 2015թ.-ը:

Հարգանքներով՝ Նվարդ Ամիրխանյան

ք. Բերլին, 25.09.20թ.